ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՋՈՀԵՐԸ

Դ. Խ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հայ ժողովրդի բազմադարյան պատմությունն ունի անկման ու վերելքի, սայթաքման ու տիտանական խոյանքի շատ էջեր։ Քաղաքական տեղատվություններն ու մակընթացությունները, որոնք հաջորդել են միմյանց զարմանալի արագությամբ, շարունակ մաքառման ու ընդվզման մեջ են պահել ստեղծագործ մեր ժողովրդին։ Մի պատերազմին, ասպատակությանը հետևել է մյուսը։ Հռոմեական լեգեոններին հաջորդել են բյուզանդական ներխուժումները, սելջուկյան գրոհներին՝ թուրքական վայրագությունները. և այսպես՝ Հայաստանը դարձել է մի ռազմաբեմ, որտեղ շարունակ արձակվել են նետեր, լսվել ձիերի սմբակների դոփյուններ, նժույգների վրնջյուններ։

Մեր ժողովրդի ողբերգական դրվագներից ամենացնցողը, սակայն, 1915 թ. համաժողովրդական աղետն է, ծրագրված թուրք ազգայնամոլ ղեկավարների կողմից, կենսագործված պատմության մեջ իր նախընթացը չունեցող բարբարոսական եղանակներով։ Այդ ծրագրով իրենց դարավոր հայրենիքից տեղահան արվեցին մոտ երկու միլիոն հայեր, որոնց կեսից ավելին զոհ գնաց զանգվածային ջարդերին։ Մնացածները քշվեցին դեպի արաբական տոթակեզ անապատները, ապա սփռվեցին աշխարհով մեկ։

Ժամանակակից թուրք պատմագրությունը ամեն կերպ փորձում է պատմության այդ սև էջը ննջացնել՝ այն ներկայացնելով իբրև պատերազմական իրադրության անխուսափելի հետևանք։ Իհարկե, դա բացարձակ կեղծիք է։ Թուրք բուրժուազիան հայաջինջ նման մի ծրագիր փայփայում էր դեռևս իր ասպարեզ գալու առաջին տասնամյակներին՝ Միդհատյան սահմանադրության օրերին։ Այդ սահմանադրության 8-րդ հոդվածը Թուրքիայում ապրող բոլոր ազգերին ճանաչում էր միայն օսմանցիներ։ Ավելի ուշ՝ 1908 թ. հուլիսին երիտթուրքերի հեղաշրջման նախաձեռնողներից Էնվերը ճշում էր, թե Թուրքիայում այլևս ոչ բուլղար կա, ոչ հույն, ոչ հայ, բոլորը օսմանցի են։ Հազիվ էր հռչակվել նոր սահմանադրությունը և մամուլը աղմկում էր կյանքի, ինչքի ազատության մասին, որ սկսվեց Կիլիկիայի ծրագրված կոտորածը, որին զոհ գնացին ավելի քան 30000 անմեղ հայեր, այդ թվում կանայք, ծերունիներ, երեխաներ։

Երիտասարդ թուրքերի ղեկավարները դեռ նոր էին անցել իշխանության գլուխ, երբ սկսեցին մոլեգին ատելություն սերմանել քրիստոնյաների, մասնավորապես հայերի դեմ։ Թուրքական թերթերը, հատկապես բալկանյան պատերազմից հետո, մամուլի ազատությունը օգտագործեցին հակահայ քարոզի համար, զարգացնելով այն տեսությունը, թե Թուրքիայում ամենից վատ ապրում է տիրապետող թուրք տարրը։ Նրանք երազում էին օսմանյան կայսրության վաղեմի հզորության վերականգնումը։ Պատերազմի նախօրյակին թուրք շովին ոգին երիտասարդ թուրքերի պաշտոնաթերթերից մեկի՝ «Թանին»-ի էջերից գրող Ագա Գյունդուզի բերանով հուր էր ժայթքում հետևյալ բառերով. «Կոխոտած տեղերուս ամեն մեկ մասեն արյուն պիտի ժայթքի, երկարած թա-

թիս տակ գարունները աշնան և աշունները զնդանի պիտի վերածվին։ Եթե քար քարի վրա ձգեմ, ետիս թողած օջախս թող քանդվի... Գթությունը պիտի կախեմ յաթաղանիս սայրին, իմաստությունը՝ հրազենիս լուցկիին, քաղաքակրթությունն ալ՝ նժույգիս ետևի պայտին. մահն պիտի սպասեցնեմ գթությունն, զնդակն՝ իմաստությունն ու դոփված հետքերն՝ քաղաքակրթությունն։ Լեռներու փապարներ, անտառներու շուքեր, խոպանությանց փոթոթված դեմքեր պիտի խոսին հավիտենության «Հոստեղեն անցնող թուրքին պատմությունը»[1]։

Գլուխ էր բարձրացնում պանթուրքիզմը, որի նպատակն էր մի դրոշի տակ միավորել Բոսֆորի ափերից մինչև հեռավոր Արևելք ընկած վայրերում ապրող թուրք-թաթարական բոլոր ցեղերին։ Պանթուրքիզմը հրապարակ էր գալիս պանիսլամիզմի շղարշի տակ, կոչ անելով միավորել երկրագնդի իբր թե 400 միլիոն մուսուլմաններիս՝ ընդդեմ քրիստոնյա աշխարհի։

Անհրաժեշտ էր սպասել նպաստավոր առիթի։ Այդպիսի առիթ համարվեց առաջին համաշխարհային պատերազմը, երբ Թուրքիայի թիկունքում կանգնեց կայզերական Գերմանիայի նման մի ռազմաշունչ պետություն։ Նա մղեց Թուրքիային դեպի արկածախնդրություն, դեպի պատերազմ, իր ձեռքը վերցրեց թուրքական զորքի ղեկավարությունը, քաջալերեց երիտասարդ թուրքերի հակահայ տրամադրությունը։ Համատեղ մշակվեց հայերի բնաջնջման ահավոր ծրագիրը՝ տեղահան անել միլիոնավոր հայերի իրենց դարավոր օջախից, քշել դեպի հարավ՝ գերմանական ծրագրով կառուցվող Բաղդադի երկաթգծի ամայի ափերը։ Այս ծրագիրը թուրք շովեն ղեկավարներին շոյում էր կրկնակի տեսակետից։ Ոչ միայն «լուծում» էր հայկական հարցը, այլև այդ վայրերը թուրք բնակչությամբ զբաղեցնելով՝ երազել էր տալիս կամուրջ գցել դեպի Կովկաս, միավորել Կովկասի մուսուլմաններին։

Թուրք պատմաբանները փորձում են հայկական կոտորածը բացատրել Կովկասյան ռազմաճակատի վիճակով, մինչդեռ տեղահանության ծրագիրը կազմվել էր այն օրերին, երբ Թուրքիան դեռևս չէր ներգրավվել պատերազմի մեջ։ Ռուսական «Գոլոս Մոսկվի» պարբերականը տեղահանության մասին գրել էր պատերազմից շատ առաջ։ Թուրքական «Իգդամ» թերթը 1914 թ. հունվարի 17-ին պատասխանելով «Գոլոսին», փորձում էր հերքել նրա գրածը, համարել ֆանտաստիկ, աննդամ տեխնիկական տեսակետից անիրագործելի[2]։

Այդ ծրագիրը մշակողների, մասնավորապես Թալեաթի, Էնվերի, Ջեմալի համար պարզ էր, որ տարագրությունը արտաքին ձև էր, այն իր հիմքում հետապնդելու էր ժողովրդի բնաջնջումը։ Հայկական կոտորածների ներքին ծալքերին քաջատեղյակ Մորգենթաուն, որ այդ տարիներին Կ. Պոլսի ամերիկյան կեսպանն էր, իր հիշողություններում գրում է. «Երբ Թալեաթ, իբր ներքին գործերու նախարար, այդ տեղահանություններուն հրամանը կուտար, լոկ մահվան վճիռը կարտասաներ ամբողջ ցեղի մը. շատ լավ գիտեր ասիկա և ինձի հետ ունեցած իր խոսակցություններուն մեջ մասնավոր ջանք չէր բներ իրողությունը քողարկելու»[3]։

---

1 Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1913, էջ 111։
2 «Հուշարձան ապրիլ տասներմեկի», Կ. Պոլիս, 1919, էջ 96։
3 «Մր. Մորկրենթաուի հիշատակները», Կ. Պոլիս, 1919, էջ 256։

Ջանգվածային կոտորածներին պաշտոնական զգեստավորում տալու համար մնում էր դիմել հետամնաց ու տգետ բնակչության կրոնական մոլեռանդություններ։ Այս պայմաններում, 1914 թ. նոյեմբեր ամսին հայտարարվեց հայտնի ջիհադը՝ սրբազան պատերազմը ընդդեմ քրիստոնյա աշխարհի։ Երիտասարդ թուրքերի թելադրանքով Շեյխ-ուլ իսլամի կողմից հրատարակված հայտարարության մեջ կոչ էր արվում մուսուլմաններին՝ կատարել Ղուրանի պատգամը և միանալ քրիստոնյա պետությունների դեմ հայտարարված սրբազան պատերազմին, խնայելով միայն գերմանացիներին։ Երիտասարդ թուրքերի թերթերը, տպագրելով այս հայտարարությունը, սկսեցին հակաքրիստոնեական մի շարժում, որի նպատակն էր գրգռել թուրք հետամնաց զանգվածներին ընդդեմ հայերի։ «Բզդամ» թերթը գրում էր. «Գործելու ժամանակը հասած է։ Մենք պետք է մեր բովանդակ ուժով, մեր ամբողջ հոգիով, մեր ակռաներով և եղունգներով, մեր մարմինին և միտքին ամբողջ ուժերով կռվինք»[4]։

Նույն օրերին երևում է գաղտնի մի տետրակ և լայնորեն տարածվում թուրք բնակչության մեջ, ընթերցվում հիմնականում հետամնաց ամբոխի առաջ։ «Անհավատները սպանելը սրբազան պարտականություն մը դարձած է, — ասվում էր այդ գրքույկում, — հոգ չէ թե գաղտնապես կատարեք կամ բացահայտորեն, ինչպես Ղուրանը հրամանագրած է. «Բռնեցեք զանոնք և սպանեցեք, երբ որ գտնեք։ Գիտցեք որ մենք զանոնք ձեր ձեռքը հանձնած ենք և ձեզի գերագույն իշխանություն տված՝ անոնց վրա...»։ Առաջարկվում էր յուրաքանչյուր մուսուլմանի՝ գեթ 3—4 անհավատ սպանել, դրա համար խոստանալով մեծ վարձատրություն հանդերձյալ կյանքում[5]։

Կոտորածի համար հողը պատրաստ էր, բայց ժողովրդին բնաջնջելուց առաջ անհրաժեշտ էր չեզոքացնել նրան ֆիզիկապես ու մտավորապես։ Պետք էր զինաթափ անել զենքի ընդունակ բոլոր տղամարդկանց։ Օսմանյան սահմանադրության տարիներին մեծ քաղաքներում, մասնավորապես Կ. Պոլսում զենքի վաճառքը ազատ լինելով՝ ատրճանակներ էին ձեռք բերել հազարավոր հայ երիտասարդներ։ Օսմանյան պետական զինվորական դպրոցում (Հարպիե) սովորում էին բազմաթիվ հայ ուսանողներ։ Պատերազմի առաջին ամիսներին հայ զինվորները ծառայում էին թուրքական բանակում՝ հավասար իրավունքներով։ Բայց հետագայում, ռազմական մինիստր Էնվերի գաղտնի հրահանգով, զինաթափվեցին, ուղարկվեցին ճանապարհաշինարարության (էմելիե թաբուրի)։ Զենքի ընդունակ ամբողջ հայ երիտասարդությունը փաստորեն աշխատում էր ճանապարհաշինարարության վրա։ Գաղթի առաջին օրերից մաս-մաս սկսեցին կոտորել նրանց։

Մնում էր մտավորականության հարցը։ Պոլսում, Իզմիրում, Տրապիզոնում, Վանում, Մուշում, Կարինում, Երզնկայում, Սեբաստիայում, Խարբերդում և այլ քաղաքներում ապրում էին մի քանի հազար մտավորականներ (գրողներ, արվեստագետներ, մանկավարժներ և այլն)։ Սրանք հայ հասարակական մտքի վրա խոշոր ազդեցություն ունեին։ Անհնար էր հայերի բնաջնջման ծրագիրը լրիվ կենսագործել՝ առանց նախօրոք հաշիվ մաքրելու այնպիսի

4 Նույն տեղում, էջ 136։
5 Նույն տեղում, էջ 136—137։

գրողների, գործիչների հետ, որոնք հնարավորություն ունեին հուզելու համաշխարհային հասարակական կարծիքը։

Իթթիհատի ճկուն գործելակերպի բնորոշ արտահայտություններից մեկն է հայ մտավորականության ջախջախման ծրագիրը, որ մշակվեց Թալեաթ-Էնվեր-Ջեմալ եռյակի ճիվաղային գանգում, մի քանի դավաճանների մասնակցությամբ, որոնք գիշերներ լուսացրին՝ կազմելու համար Կ. Պոլսում ապրող հայ մտավորականների լիակատար ցուցակը։

Որքա՞ն է մտավորական գոհերի թիվը՝ դժվար է ասել։ Թեոդիկը 1919 թ. կոտորածից անմիջապես հետո կազմեց մի ժողովածու, որտեղ այդ թիվը հասնում է հազարի[6]։ Բայց դա նախնական էր։ Տարիներ էին անհրաժեշտ, որպեսզի աստիճանաբար ճշտվեին փաստերը։ Հետագայում գրվեցին հարյուրավոր գրքեր, հուշագրություններ, մի քանի տասնյակ հետազոտություն՝ առանձին գավառների՝ կոտորածի մասին։

Երբ հանգամանորեն ուսումնասիրում ենք այդ ամբողջ գրականությունը, մեր աչքի առաջ պարզվում է, թե թուրք ազգայնամոլները ինչպիսի հարված են հասցրել հայ մտքին։ Թեոդիկի կազմած հազար անունների ցանկը կարող է հեշտությամբ կրկնապատկվել։ Անշուշտ, նոր անունների մեջ չեն լինի վարուժաններ ու սիամանթոներ, բայց կան հարյուրավոր դեմքեր, որոնք մասնակցություն են ունեցել հայ մշակույթի զարգացմանը, երկար տասնամյակներ աշխատել են որպես մանկավարժներ, հասցրել սերունդներ, կան երաժիշտներ, որոնք այդ խավար դարաշրջանում դաշնակահարներ, ջութակահարներ են պատրաստել, խմբագիրներ, որոնք գավառական հետամնաց քաղաքներում հրատարակել են թերթեր, բանահավաքներ, որոնք գյուղեգյուղ թափառելով՝ հավաքել են հայ ժողովրդի անգիր բանահյուսությունը, հրատարակել Կ. Պոլսի ու գավառի մամուլում, ճարտարապետներ, նկարիչներ, որոնք զոհ գնացին իրենց նախագծերի ու կտավների վրա աշխատելիս։

Այս բոլորով հանդերձ արևմտահայ մտքի կենտրոնը առաջին հերթին Պոլիսն էր։ Հայտնի է, որ 1895—1896 թթ. կոտորածներից հետո ականավոր հայ մտավորականները բոլորն էլ անցել էին արտասահման՝ Փարիզ, Լոնդոն, Վենետիկ և այլ քաղաքներ, մասամբ էլ Եգիպտոս։ Դրսում էին Սիամանթոն, Վարուժանը, Ռ. Զարդարյանը, Ռ. Սևակը, Ա. Արփիարյանը, Տ. Կամսարականը, Ե. Օտյանը, Լ. Բաշալյանը, Ա. Զոպանյանը, Զ. Եսայանը, Վ. Թեքեյանը, Ս. Բյուրատը, Երուխանը և հարյուրավոր այլ գրողներ, արվեստագետներ։ Սահմանադրության խաբեպատիր շեփորները հետ բերեցին բոլորին։ Ազատության պատրանքը նույնիսկ ամենահեռատես մարդկանց աչքին գցել էր մի տեսակ քող. նրանք չէին տեսնում սահմանադրախաղի ներքին կողմերը։ Գր. Զոհրապի նման լրջախոհ մի գրող Փարիզից արագորեն եկել էր Պոլիս և Ա. Զոպանյանին խորհուրդ էր տալիս հետևել իր օրինակին։ Հետզհետե Պոլիս եկան բոլոր գրողները, աննախընթաց աշխուժություն տալով գրական կյանքին, հատկապես մամուլին, որի էջերից հորդում էին հրապարակախոսությունը, բանասիրությունը, գեղարվեստական արձակն ու չափածոն։ Առաջ եկավ այսպես կոչված թերթոնային մի դրականություն, որի բնագավառում միմյանց հետ մրցում էին Ե. Օտյանը, Սմբատ Բյուրատը և ուրիշներ՝ տարբեր թերթերի

6 «Հուշարձան ապրիլ տասներմեկի. կենսագրական բաժին», հավաքեց և խմբագրեց Թեոդիկ։

էջերում տպագրելով ընդարձակ ու ծավալուն վեպեր, մեծ մասամբ ուղղված Համիդյան բռնապետության դեմ։

Այդ տարիներին լույս տեսան Գր. Զոհրապի «Խղճմտանքի ձայներ», «Լուսացավեր», «Կյանքը ինչպես որ է» ժողովածուները, Ռ. Զարդարյանի «Ցայգալույսը», Ե. Օտյանի, Ս. Բյուրատի, Ա. Շիտանյանի, Մ. Քոչունյանի տասնյակ վեպերը, Երուխանի «Կյանքին մեջեն» նովելները, Վարուժանի «Ցեղին սիրտը», «Հեթանոս երգերը», Ռ. Սեակի «Կարմիր գիրքը», Սիամանթոյի, Ա. Հարությունյանի, Մ. Պարսամյանի, Հ. Ճ. Սիրունու, Ա. Անտոնյանի, Ա. Զոպանյանի, Ռ. Որբերյանի, Ս. Պարթևյանի, Ա. Թեոդիկի, Սիպիլի, Զ. Եսայանի և բազմաթիվ այլ գրողների երկերը։

1890-ական թթ. սկսված գյուղագրությունը նոր թափ ստացավ Թլկատինցու, Ռ. Զարդարյանի, Գեղամ Կարապետյանի, Ա. Հարությունյանի և ուրիշների սքանչելի պատմվածքներով։ Երուխանը ընդարձակում էր արևմտահայ գրականության թեմատիկան, ընթերցողին տանելով դեպի ձկնորսների խրճիթները, դեպի ծովափն ու սալահատակները։ Ե. Օտյանը հիմք դրեց գեղարվեստական արժեք ներկայացնող արկածային վեպի։ Նրա «Աբդուլ Համիդ և Շերլոկ Հոլմս», «Սալիհա հանում» և այլ վեպերը, հազիվ թերթոնված մամուլում՝ թարգմանվում էին թուրքերեն, հունարեն, ֆրանսերեն։ Նույն այդ շրջանում Օտյանը հրապարակ հանեց հայ քաղաքական երգիծանքի ամենափայլուն նմուշներից մեկը՝ «Ընկեր Փանջունին»։ Թեմատիկ ընդգրկման նկատելի լայնացում ապրեց նաև չափածո գրականությունը։ Հայրենասիրական, ազատագրական և սիրային երկերին զուգընթաց երևացին բանաստեղծություններ, որոնց մեջ երգվում էր բանվոր դասակարգի վիճակը, նրա պայքարը կապիտալի դեմ։ Նկատի ունենք Դանիել Վարուժանի «Նեմեսիսը», «Դադարը», «Մայիսի մեկը», Ռ. Սեակի «Այս դանակը» և այլն։

Բալկանյան պատերազմը մեծամասամբ զգաստացրեց մարդկանց, ցրեց մշուշը, թուլացրեց սահմանադրության առաջին տարիների մտավոր ալկոհոլի ազդեցությունը, բայց խոյանքը դեռ շարունակվում էր. պատրանքը շատ էր ուժեղ։ Հայ գրողների ճնշող մեծամասնությունը չկասկածեց իթթիհատական ղեկավարների վրա, մնաց Պոլսում, հանդիստ քնեց ապրիլի 24-ի անակնկալներով հղի գիշերը, մինչև որ հանկարծ թուրք ոստիկանությունը միաժամանակ խփեց մոտ 250 դուռ, հարյուրավոր մտավորականների կտրելով քաղցր երազներից։ Առանց բացառության բախեցին նշանավոր բոլոր գրողների, արվեստագետների դռները, հավաքեցին նրանց, լցրին կենտրոնական բանտը։

Հետո... հաջորդ առավոտ նրանց դուրս են բերում բանտից, գցում նավակների մեջ, ոստիկանական խիստ հսկողությամբ տեղափոխում երկաթուղային կայարան, լցնում վագոնները, փակում լուսամուտները։ Գնացքը շարժվում է դեպի Անկարայի բացուտները։ Ոմանք լավատես էին, փորձում էին կատակել, բայց ոմանց, առավել զգայուն մարդկանց դեմքին իջել էր ծանր մի թուխպ։ Անմահ Կոմիտասը, որ ձերբակալման առաջին րոպեներից ունեցել էր ջղաձգական ցնցումներ, գնացքի մեջ հոգեկան անհավասարակշռության նշաններ է ցույց տալիս։ Ճամփի երկու եզերքներին շարված ծառերը նրան թվում են թաքնված ոստիկաններ։ Մահվան այդ կարավանի մեջ էին մեր հիշատակած գրեթե բոլոր գրողները՝ Դանիել Վարուժանը, Սիամանթոն, Ռ. Զարդարյանը, Ռ. Սեակը, Սմբատ Բյուրատը, Մելքոն Կյուրճյանը, Գեղամ Բարսեղյանը, Գեղամ Կարապետյանը, Տ. Զեկյուրյանը, Միքայել Շամտանճ-

յանը, «Սարահ» թերթի խմբագիր Տիրան Քելեկյանը, «Բյուզանդիոն» թերթի խմբագիր Բյուզանդ Քեչյանը, «Կառափնատ» թերթի խմբագիր Արամ Անտոնյանը, դերասան Ենովք Շահենը, երգիծարաններ Երվանդ Թոլայանը, Գրիգոր Թորոսյանը, բազմաթիվ ուսուցիչներ, մշակութային, հոգևորական գործիչներ։

Անկարայից ոչ հեռու՝ Զեյֆան Քեոյի մոտակայքում գնացքը կանգ է առնում։ Մոտ ութսուն հոգու իջեցնում են և ուղարկում Այաշ կոչվող վայրը։ Դրանց մեջ էին Ռ. Զարդարյանը, Նազարեթ Տաղավարյանը, Սիամանթոն, Ենովք Շահենը, Սմբատ Բյուրատը, Մելքոն Կյուրճյանը։ Մյուսներին նորից լցնում են վագոնները և ուղարկում Զանկրրի։ Սրանց մեջ էին Կոմիտասը, Դանիել Վարուժանը, Ռուբեն Սևակը, Տիրան Քելեկյանը։ Թե՛ Այաշում և թե՛ Զանկրրիում մի քանի օր կալանավորները պահվում են հսկողության տակ, ապա հնարավորություն է տրվում նրանց՝ դուրս գալ զորանոցից, լինել բնակչության մեջ, ճաշել իրենց համար սահմանված ճաշարաններում՝ իթթիհատի լրտեսների հետախույզ աչքերի տակ։ Նրանց մեծ մասը չի կորցրել հոգու արիությունը, հավատը ապագայի նկատմամբ, լուսկ մի քանի միամիտներ դեռ հույսեր են տածել Թալեաթի նկատմամբ։ Այսպես, Սմբատ Բյուրատը 1915 թ. մայիսի 30-ին Այաշից հարազատներին ուղարկած բացիկում գրում էր. «Եթե Թալեաթ բեյ գիտնա թե ընտանյոք ինչ աղետի ու զրկանքի ենթարկված եմ, վերջ պիտի տա ներկա վիճակիս, որ կը նսեմացնե իր վեհանձնությունը։ Անշուշտ պիտի գա օր մը, — և այն օրը շատ մոտ է, — որ Արդարությունը պիտի հայտնվի, ինչ օգուտ սակայն, քաշածնիս մեզի պիտի մնա»[7]։ Գրեթե նույն ոգով բացիկներ է գրել Սիամանթոն՝ մինչև սպանության օրն էլ հավատացած լինելով, թե թյուրիմացություն է պատահածը։ Հունիսի 26-ի նամակում նա իր հարազատներին հայտնում է, թե ինքը անմեղ է և արդարադատ մի պետություն իր նման անմեղները, անշուշտ, ազատ պիտի արձակի։ «Եթե մի քիչ էլ դուք աշխատեք ու հետաքրքրվեք՝ շուտով ձեզ գրկելու և մայրիկիս ձեռքերն անձամբ համբուրելու բախտին պիտի արժանանամ»[8], — վերջացնում էր բանաստեղծը։

Աքսորականներն ավելի լավատես են դառնում, երբ նրանցից մի քանիսը, հատկապես հարուստ վաճառականները, ազատվում են։ Առհասարակ հույսը փայփայել է մահվան այդքան մոտ կանգնած մարդկանց։ Անգամ Կոմիտասը գրաղեցրել է իր ընկերներին[9] հուզիչ երգերով, այդ թվում հռչակավոր «Տեր ողորմյայով», որն այս ամայի վայրերում հնչում էր յուրահատուկ խորհրդավորությամբ։ Կոմիտասը, Պոլիս վերադառնալուց հետո, համեմատաբար զգաստ մի պահին պատմել է, թե Վարուժանը, ձեռք բերելով թղթի կտորներ, բանաստեղծություններ էր գրում։ Գրել են շատերը՝ իրենց ձեռքն անցած թղթի կտորների վրա, Այաշի ու Զանկրրիի պատերին։

Ի՞նչ եղավ այս հայ մտավորականության ճակատագիրը։ Այդ մասին գրվել է ավելի շատ, քան հայոց պատմության որևէ շրջանի մասին, գրվել են հավաստի աղբյուրների տվյալներով։ Գրել, պատմել են այն մարդիկ, որոնք եղել են կարավանի մեջ, ազատվել են տարբեր պատճառներով։ Փաստեր են հավաքվել նաև կամա-ակամա ոպսնդին մասնակցած Թուրքերից։ Մեր նպա-

7 «Հուշարձան ապրիլ տասներմեկի», էջ 21։
8 Երականության և արվեստի թանգարան, Սիամանթոյի ֆոնդ։
9 Այաշի բանտի պատերին գրվածները տե՛ս «Հայկաշեն տարեգիրք», 1922, էջ 23—24։

տակը չէ հանրահայտ այդ փաստերը նորից կրկնել։ Միաժամանակ չենք կարող կենթ համառոտ կանգ չառնել այն իրողության վրա, որ մտավորականության ջարդը նույնպես, ինչպես ամբողջ հայ ժողովրդի կոտորածը, ո՛չ թե արդյունք էր պատերազմական իրադրության, թելադրանք՝ պաշտպանական նկատառումների, ինչպես փորձում են ցույց տալ թուրք պատմաբանները, այլ յթթիհատի ծրագրի մի մասն էր։ Իրականում Թալեաթը հայ մտավորականության ջարդով զբաղվել է նույնքան, որքան ռազմաճակատի վիճակով։ Նա շարունակ հեռագրային կապ է պահպանել ոստիկանատների հետ, անձամբ որոշել սպանությունների հերթականությունը։

Աքսորված մտավորականների մայր ցուցակը գտնվում էր Թալեաթի սեղանի գզրոցի մեջ։ Նա էր հրահանգում խմբակային սպանությունները։ Այս պայմաններում, խումբ առ խումբ ընթերցվում են նրանց անունները, Չանկրրիի ու Այաշի արգելանոցներից դուրս բերելով նրանց՝ կառքերով տանում են բաց տարածություններ ու սպանում։ Յուրաքանչյուր դեպքում աքսորականներին հայտնվում էր, թե նրանց տանում են Դիարբեքիր (Տիգրանակերտ) ռազմական ատյանում դատելու... Այսպես, Ռ. Զարդարյանին, բժ. Ն. Տաղավարյանին, Է. Ակնունուն և երեք ուրիշ մտավորականների Այաշից կառքով դուրս են բերում նույն հավաստիացմամբ և ճամփին, Ուրֆայի մոտերքը, սպանում տեղի իթթիհատական կուսակալ Ռեշիդ բեյի կողմից ուղարկված ավազակների միջոցով[10]։

Նույն ձևով, Անկարայի մոտերքը սպանվում են Սիամանթոն, Սմբատ Բյուրատը և ուրիշներ։ Թե նախօրոք մշակված ծրագիրը ինչպիսի հետևողականությամբ էր կենսագործվում և Թալեաթն էլ որքան մասնակցություն ուներ մտավորականների ջարդին, երևում է Չանկրրիի աքսորականների այն խմբի սպանությունից, որոնց մեջ էին Դանիել Վարուժանը և Ռուբեն Սևակը։ Սրանց խոշտանգմանը նախորդում է Պոլսից տրված հեռագրերի ստացումը, որի հիման վրա տեղում իթթիհատական ակումբի անդամները գաղտնի նիստեր են գումարում։ Նախապատրաստական այս աշխատանքից հետո որոշում են Վարուժանին, Սևակին և երեք այլ տարագիրների աքսորել... Երբ մնացող մտավորականներից մեկը այցելում է Չանկրրիի փոխ-կառավարչին և խնդրում հետաձգել նրանց մեկնումը, վերջինս պատասխանում է, «Ես չեմ կրնար չգործադրել Պոլսեն եկած հրաման մը»[11]։ Նրանց նստեցնում են կառքը։ «Ճափաղանց հուզված էինք ամենքս ալ, — գրում է Գր. Պալաբյանը, — արյուն կը վազեր մեր սրտերեն և՝ հակառակ մեր ջանքերուն, անկարող էինք գսպելու մեր արցունքները... Եվ երբ տարաբախտ Վարուժան և Սևակ՝ դառնալով կրսեին մեզի թե մեր որբերուն տեր եղեք... Եվ երբ Վարուժան մասնավորի կրսեր թե. «Նոր գավակ մը ունեցած եմ, թող անունը Վարուժան դնեն...», ալ մեր ամենքին հուզումը չափ ու սահման չուներ և մեր միտքերը չէին գործեր, որ մխիթարության երկու խոսք բսեինք»[12]։

Չանկրրիի իթթիհատի ակումբը ոճրագործ Հալոյին էր արժանացրել Վարուժանին, Սևակին սպանելով՝ ջհննեթի բարիքները վայելելու պատիվը։ Հալոն իր ավազակախմբով կարում է ճանապարհը, իջեցնում կառքից տարագիր-

10 Գ ր. Պ ա լ ա բ յ ա ն, Հայ Գողգոթան, Ա հատոր, էջ 135—136։
11 Նույն տեղում, էջ 145։
12 Նույն տեղում, էջ 146—147։

ներին, ապա նրանց առաջնորդում մի հրձակա ձորը, մի առվի եզերքը և իր խմբով անցնում գործի... Ականատես կառապանի պատմածից երևում է, որ Վարուժանը փորձել է դիմել ինքնապաշտպանության, որի համար ենթարկվել է ավելի վայրագ խոշտանգումների: Վարուժանին ու Սեակին դեպի մահ առաջնորդող թուրք կառապանը Ջանկրրի վերադարձին հուզումով է պատմել այս բոլորը և ասել. «Ասանկ արհեստը գետնին տակը անցնի, ինձի պետք չէ ասանկ շահը... ես կառքս, ձիերս այսօր-վաղը պիտի ծախեմ և հեռանամ այս քաղաքեն»[13]:

Այսպես, բիրտ նախամարդու վայրագ ձեռով խլվեց հայրենասեր այն գրողների կյանքը, որոնք այնքան մեծ տաղանդով երգել էին կյանքը, սերը, հայրենիքը, աշխատանքը, սոցիալական, իրավական անհավասարությունը:

Գրիգոր Զոհրապը մինչև 1915 թ. մայիսի 20-ը Պոլսում էր: Նա մի քանի անգամ առիթ է ունենում վիճելու Թալեաթի հետ՝ հայ մտավորականության ջարդի և արդեն սկսված մասսայական կոտորածների շուրջ, իսկ մի առիթով ասում է նրան, թե այդ բոլորի համար նա ապագայում հաշիվ է տալու ժողովրդին: Դրանից մի քանի օր հետո ձերբակալվում են օսմանյան երեսփոխանական ժողովի երկու դեպուտատները՝ Զոհրապն ու Վարդգեսը: Նրանց էլ ուղարկում են դեպի Տիգրանակերտ... Զոհրապը, որպես օսմանյան պառլամենտի պատգամավոր, ճանապարհին թուրք պաշտոնյաների կողմից վայելում է որոշ հարգանք, այդ մարդիկ քանիցս հեռագրում են Թալեաթին, միջնորդում, որ խնայի Զոհրապի կյանքը, բայց դաժան բռնապետը համառում է, պահանջում անպայման սպանել:

Ինչպես Սիամանթոն, Բյուրատը և ուրիշ աքսորականները, Զոհրապն էլ միշտ հույս է ունեցել, թե Թալեաթը կազատի իրեն: Ճանապարհին, երբ երկաթուղային մի հայ աշխատող, իր կյանքը վտանգի ենթարկելով՝ առաջարկել է փախցնել նրանց, Զոհրապը պատասխանել է, թե իրենք օսմանյան պառլամենտի անդամ են և իրենց կյանքի մասին երկյուղ չունին և չեն տարակուսում, որ «անպարտ պիտի արձակվին Տիգրանակերտի պատերազմական ատյանեն...»: Այս ձևով Զոհրապն ու Վարդգեսը հասնում են Հալեպ: Այդ քաղաքի կուսակալն էլ, որ լավ ճանաչում էր բարձրապատիվ աքսորականներին, գիտեր, թե ինչ ճակատագիր է սպասում նրանց, դիմում է Պոլիս՝ Թալեաթին, խնդրում թույլ տալ պահել նրանց որպես ազատ աքսորականներ: Արդյունքը լինում է կուսակալի արագ պաշտոնագրկումը, նորի նշանակումը: Վերջինս գործի անցնելու հաջորդ օրը Զոհրապին ու Վարդգեսին ուղարկում է Ուրֆա, որտեղ նրանք հյուրասիրվում են տեղի երեսփոխաններից մեկի՝ Մահմուդ Նեդեմի կողմից: Հենց հյուրասիրության ընթացքում հայտնվում է ոստիկանը, կուսակալի հրամանով առաջարկում իսկույն կառքով մեկնել Դիարբեքիր: Ճամփին, ըստ նախօրոք եղած կարգադրության, ոճրագործները հարձակվում են անպաշտպան մտավորականների վրա, սպանում նրանց գազանային խոշտանգումով[14]: Այդ մասին հեռագրվում է Թալեաթին, որն շտապում է հայտնել Զոհրապի տիկնոջը, թե ճամփին նրա ամուսինը սրտի կաթվածից մահացել է: Կինը պահանջում է պաշտոնական գրություն: Մարդասպանի գաղտնի հրահանգով ստեղծվում են երկու կեղծ փաստաթղթեր, մեկը՝ իբր թե բժշկական

[13] Նույն տեղում, էջ 150:

[14] Ա. Ալպոյաճյան, Գրիգոր Զոհրապ. իր կյանքը և գործը. Կ. Պոլիս, 1919, էջ 246

եզրակացություն, մյուսը՝ թաղող քահանայի վկայություն։ Երկրորդ փաստաթուղթը այնքան հապճեպ էր պատրաստվել, որ ստորագրողը մի տեղ դարձել էր վարդապետ, մի տեղ՝ քահանա[15]։

Այս կեղծ փաստաթղթերը անհրաժեշտ էին 1915 թ. աշնանը՝ ոտար մի ապահովագրական ընկերության ներկայացնելու համար, իսկ հաջորդ տարի այլևս նման միջոցների դիմելն էլ ավելորդ դարձավ, և երբ օսմանյան պառլամենտում հարցում է արվում բացակա հայ երեսփոխանների վիճակի մասին, ժողովի նախագահը կարդում է մի պաշտոնագիր, որի մեջ ի միջի այլոց ասված էր. «Անցած նստաշրջանում երեսփոխանական ժողովին չմասնակցած երեսփոխաններից Էրզրումի երեսփոխան Վարդկես և Պոլսի երեսփոխան Հոհրապ էֆենտիները Դիարբեքիրի (Տիգրանակերտի) ռազմական ատյանի առջև դատվելու համար ուղարկվելիս՝ ճամփին Ջերքեզ Ահմեդի ու նրա չեթեների կողմից սպանված լինելով՝ մարդասպանները Շամի (Հալեպի) ռազմական ատյանի կողմից մահվան դատապարտվել են»։ Ժողովի նախագահը այս պաշտոնագիրը ընթերցելուց հետո ամբարտավան ասունությամբ հայտարարում է. «Հիմա այս թեզքերին պարունակության նայելով՝ Կարնո մեպուս Վարդգես էֆենտի, Պոլսո մեպուս Հոհրապ էֆենտի, Արզրնիի մեպուս Ստեփան էֆենտի, Վանա մեպուս Վռամյան էֆենտի, դարձյալ Վանա մեպուս Փափազյան էֆենտի սպանված են, ողջ չեն»[16]։

Այսպիսով, պաշտոնապես օսմանյան պառլամենտի ամբիոնից հայտարարվում էր, թե դեպուտատ Հր. Հոհրապը առանց դատ-դատաստանի սպանվել էր Ջերքեզ Ահմեդի կողմից։ Բայց ո՞վ էր այդ Ահմեդը. մի սովորական ավազա՞կ, որի նմաններին էր վստահում իթթիհատական կուսակցությունը հայերի սպանությունը։ Ո՛չ, այս մեկը մի քիչ տարբեր էր։ Նա համարվել է «Իթթիհատի կառավարության աչքի լույսը», — ինչպես գրում էր պատերազմից հետո այս դեպքերին անդրադարձող թուրքական «Իգդամ» թերթը։ Իթթիհատական կառավարությունը նրան էր վստահել մի շարք շրջանների հայերի մասսայական ջարդի կազմակերպումը։ Երբ հետագայում ձերբակալվել է Ահմեդը, զարմանքով հայտարարել է, թե ինքը Վանը և շրջակա վայրերը ամայացրել է հայերից, «Հայրենիքին այսքան ծառայություն» մատուցել, մինչդեռ իրեն պատժում են։ «Իգդամ» թերթը պատմում է, թե «իր բոցավառ իմացականությամբը. բեղմնավոր մտքովը, զգայուն հոգվովը» հայրենիքին ծառայող Հոհրապն ինչպես է սպանվել Ահմեդի կողմից։ Երբ թուրք թղթակիցը Ջերքեզ Ահմեդին հարցրել է, թե ինչպես սպանեց Հոհրապին, վերջինս պատասխանել է. «Հալեպն ելած էին։ Ճամփան հանդիպեցանք։ Իսկույն իրենց կառքերը պաշարեցի։ Հասկցան թե պիտի սատկին։ Վարդգես ասավ որ «շատ ալեկ, Ահմետ պեյ, մեզի այս բանը կրնեք կոր. սակայն արաբներո՞ւն ինչ պիտի ասեք։ Ձենե անոնք ալ գոհ չեն»։ «Ատիկա քու գիտնալիք գործդ չէ, քերաթաս», ասի, մավզերի գնդակով մը ուղեղը պայթեցուցի, հետո Հոհրապը ձեռք անցուցի։ Ոտքիս տակը առի, խոշոր քարով մը գլուխը ճզմեցի, ճզմեցի, ճզմեցի, մինչև որ սատկեցավ»[17]։

15 Այդ փաստաթղթերի նմանատիպը տե՛ս Ա. Այպոյանց, նույն տեղում, էջ 247, 248։
16 Նույն տեղում, էջ 249։
17 Նույն տեղում, էջ 252։

Այժմ մի քանի խոսք մյուս զոհերի մասին։ Դրանցից են դերասան Ենովք Շահենը. ամբողջովին արվեստին զինվորագրված խանդավառ մի պատանի, որի անվան հետ է կապվում սահմանադրության առաջին օրերին պոլսահայ թատրոնի վերակենդանացման աշխատանքը։ Այդ օրերին երկու անուն էր անցնում թերթից թերթ՝ Վահրամ Փափազյան և Ենովք Շահեն։ Երկուսն էլ խոստումնալից, մեծ հեռանկարի առաջ կանգնած երիտասարդներ։ Փափազյանը Պոլսում չգտնվելով՝ ազատվեց վերահաս կոտորածից, իսկ նրա ընկերը զոհվեց Էնկյուրիի մոտակայքում։

Մի այլ անուն՝ Տիրան Քելեկյան։ Այս մարդը գուցե հայ մշակույթին այնքան չէր ծառայել, որքան թուրք մամուլին ու գրականությանը՝ թե՛ իր «Սարան» (Առավոտ) ամենօրյա լրագրով և թե՛ թուրքական բարձրագույն դպրոցներում տված իր դասախոսություններով։ Ինչպես Զոհրապը, Տիրան Քելեկյանն էլ աքսորի երկար ճամփին հանդիպել է բարեկամ թուրքերի, որոնք աշակերտել էին նրան Պոլսի իրավաբանական համալսարանում։ Երախտապարտ աշակերտներից առավել աղնիվ նկարագրի տեր եղողները հեռագրով միջնորդել են Պոլիս՝ ազատելու իրենց սիրելի ուսուցչին. բայց նույն քար լռությունը, ինչպես Զոհրապի դեպքում։ Նրան էլ Ալիս գետի ափերին տանջամահ անելուց հետո հայտնել են, թե կամրջից անցնելիս իրեն գցել է ջուրը հոգեկան անհավասարակշիռ վիճակում[18]։

Մտավորական այս զոհերի մեջ էր դարասկզբի արևմտահայ ամենաինքնատիպ գրողներից մեկը՝ Տիգրան Չեոկյուրյանը, որը քիչ է գրել, բայց թե՛ իր առաջավոր գաղափարախոսությամբ և թե՛ ինքնատիպ ոճով աչքի էր ընկել կարճ ժամանակամիջոցում, դարձել արևմտահայ գրականության սիրված դեմքերից մեկը։ Նրա «Հերոսը», մանավանդ «Վանքը» մեր գրականության լավագույն նմուշներից կարող են համարվել։

Հայ գրականության ամենախոստումնալից ուժերից էր Արտաշես Հարությունյանը, որի հրապարակ գալը 1890-ական թթ. մի հայտնություն էր հայ գրականության համար։ Նրա արձակ և չափածո երկերը, մանավանդ տեսական, գրականագիտական աշխատությունները իր ժամանակին մեծ ընդունելության են արժանացել։ Հարությունյանը ձերբակալվեց Պոլսում 1915 թ. օգոստոս ամսին, աքսորվեց Իզմիր, ապա վայրենի խոշտանգումներով սպանվեց Դերբենտի կայարանի մոտակայքում[19]։

Նույն այն օրերին, երբ ձերբակալվում ու բանտարկվում էին պոլսահայ մտավորականները, քաղաքական գործունեության մեղադրանքով բանտարկվում էին հայ մտքի մշակները նաև գավառում։ Այսպես՝ Սեբաստիայում, Խարբերդում և մի քանի այլ վայրերում ձերբակալությունները կատարվեցին նույն այդ կիրակիի ցերեկն ու գիշերը, մի բան, որ վկայում է Իթթիհատի ղեկավարների մշակած ծրագրի բնույթի մասին։

Գավառում զոհված մտավորականների մեջ է հայ արձակ գրականության աչքի ընկնող դեմքերից Սրուխանը (Երվանդ Սրմաքեշխանլյան), ծնված և ուսած Կ. Պոլսում, աշխատավորական խավերի, մասնավորապես պոլսահայ ձկնորսների կյանքը ամենաիրական գույներով ներկայացնող մի գրող։ Նա 1913 թ. աշնանը հրավիրվել էր Խարբերդ պաշտոնավարելու տեղի ազգային

18 Գր. Պալաբյան, էջ 169—170։

19 Ա. Հարությունյան, Արձակ էջեր և թերթվածներ, Փարիզ, 1937, էջ 21—22։

վարժարանում որպես տեսուչ։ Նույն այն օրերին, որ Պոլսի իր գրչեղբայրները տարագրվում էին Այաշ, նա էլ, ի թիվս այլ մտավորականների ձերբակալվում է, նետվում Մեղրեի կենտրոնական բանտը, ենթարկվում անլուր տանջանքների, ապա տարվելով քաղաքից դուրս՝ սպանվում է[20]։

Խարբերդի գոհերից է հայ ականավոր գյուղագիր Թլկատինցին (Հովհ. Հարությունյան), որ հայ գրականության արևմտահայ հատվածում ստեղծեց գրական մի ամբողջ շարժում, մեր արձակը հարստացնելով մի քանի տասնյակ երկերով, որոնք իրենց հյութեղ ոճով, ժողովրդական բառ ու բանի հարազատ օգտագործմամբ, հոգեբանական խորությամբ և ռեալիզմով՝ կարող էին պատիվ բերել առաջավոր ամեն մի գրականության։ Քաղաքական կուսակցություններից բոլորովին հեռու կանգնած, բայց իր ամբողջ էությամբ ժողովրդին ծառայող այս գրող մանկավարժը, որի սաներից են Ռ. Զարդարյանը, Վ. Թութվենցը, Համաստեղը, Վահե Հայկը, Բ. Նուրիկյանը և տասնյակ այլ գրողներ, սպանվել է Խարբերդի կենտրոնական բանտում անլուր խոշտանգումների ենթարկվելուց հետո[21]։

Ահա մի քանի համեստ անուն էլ, բոլորն էլ գոհ Խարբերդի եղեռնին՝ պրոֆ. Կարապետ Սողիկյան. սովորել է Եփրատ կոլեջում, պաշտոնավարել Թլկատինցու ազգային դպրոցում, գրել է բանաստեղծություններ, որոնք լույս են տեսել հետմահու՝ նրա աշակերտների ջանքերով։ Հանդիսանում է հայ գավառական մամուլի անխոնջ մշակներից մեկը, հիմնադիրը Խարբերդի «Եփրատ» պարբերականի։ Կոտորածի օրերին ենթարկվել է աննկարագրելի խոշտանգումների, տեղափոխվել ամերիկյան հիվանդանոց և այնտեղ մեռել[22]։

Պրոֆեսորներ Մկրտիչ Որբերյան, Հովհ. Պուճիգանյան, Տոնապետ Լյուլեճյան։ Երեքն էլ Եփրատ կոլեջի շրջանավարտներ, որոնք բարձրագույն կրթություն էին ստացել Ամերիկայում և վերադառնալով իրենց ծննդավայրը ունեցել կրթական, մանկավարժական, գրական բեղուն գործունեություն։ Հայ պարբերական մամուլում տպագրել են ուշագրավ հետազոտություններ, անգլերենից կատարված թարգմանություններ։ Բացի սրանցից՝ Խարբերդի շրջանը գոհ է տվել մի քանի տասնյակ ուսուցիչներ, վաստականերներ, հասարակական-մշակութային գործիչներ, հոգևորականներ և այլն[23]։

Սեբաստիայի շրջանում գոհվածների մեջ է մշակութային գործիչ, գրող Միհրան Իսպիրյանը։ Ունեցել է երկար տարիների գրական, մանկավարժական, հրապարակախոսական գործունեություն։ Առանձին գրքերով լույս է ընծայել մի քանի աշխատություն, ինչպես՝ «Խուցեն պատկերներ», «Սրտի էջեր», «Գրական շրջաններ» և այլն։ Դարձյալ Սեբաստիայի գոհերից հիշատակության արժանի են հայտնի մշակութային գործիչ, պատմական մի շարք գրքերի հեղինակ, Մետերլինկի «Կապույտ թռչունի» և այլ երկերի թարգմանիչ Սենեքերիմ Գալենոնցյանը, Սեբաստիա քաղաքի հայկական տպարանի ստեղծող Կարապետ Պարսամյանը, երկարամյա մանկավարժ, խմբագիր Դանիել Թուլլաճյանը, հայտնի մանկավարժ, Սորբոնի համալսարանի շրջանավարտ Արամ Հակոբյանը, Ամերիկյան Կոլումբիա համալսարանի շրջանավարտ, «Կոչնակ» պար-

20 «Հուշարձան ապրիլի տասնմեկի», էջ 56։

21 Վահե Հայկ, Խարբերդ և անոր ոսկեղեն դաշտը, Նյու-Յորք, 1959, էջ 1077։

22 Նույն տեղում, էջ 1144։

23 Մանրամասն տե՛ս Հիշատակարան Եփրատ Գոլեջի գրքում, նաև՝ Վահե Հայկի նշված աշխատությունում։

բերականի խմբագիր Ռուբեն Բագուպյանը, Ժնևի համալսարանի շրջանավարտ Համբարձում Պլեճյանը և այլ մանկավարժներ, որոնք բոլորն էլ աշխատում էին Սեբաստիայի դպրոցներում՝ Սանասարյան վարժարան, Արամյան վարժարան, Ամերիկյան կոլեջ և այլն[24]։

Մշակութային բնագավառի բազմաթիվ գոհեր տվեց Մարդվանի շրջանի հայությունը։ Դրանցից են ամերիկյան Կարլտոն համալսարանի շրջանավարտ, ականավոր աստղագետ, մասնագիտական արժեքավոր գրքերի հեղինակ Առաքել Սիվասյանը, Մասաչուսետսի համալսարանի շրջանավարտ, հայտնի բառարանագետ, անգլո-հայերեն բառարանների հեղինակ Հովհ. Հակոբյանը, մասնագիտական կրթությունը Բեռլինի կոնսերվատորիայում ստացած, երաժշտական ուշագրավ երկերի հեղինակ, կոմպոզիտոր Արշակ Տաղլյանը, մշակութային գործիչ, խմբագիր, «Պատմություն հայ լեզվի և բանահյուսության» արժեքավոր գրքի հեղինակ Գադիկ Օգանյանը և ուրիշներ[25]։

Գավառահայ մտավորականության տաղանդավոր ներկայացուցիչներից էր լեզվաբան, բանասեր, «Օվդոկիայի գավառաբարբառը» արժեքավոր հետազոտության հեղինակ Հովհ. Գազանճյանը, որ սպանվեց Եվդոկիայում, 1915 թ.։

Արևմտահայ իրականության համար ուշագրավ հրևույթ է Գարեգին Կողիկյանը, որը դեռևս նախքան ռուսական առաջին հեղափոխությունը հակվել էր դեպի սոցիալ-դեմոկրատական գաղափարները, Կովկասում և Պոլսում խմբագրել բանվորական թերթեր։ Աքսորի ճամփին թշնամու ծաղը ու ծանակին չարժանանալու համար՝ նա կնոջ հետ նետվում է գետը և խեղդամահ լինում[26]։

Վանի գոհերից հիշատակենք տեղի Երամյան վարժարանի շրջանավարտ Արտաշես Սոլաքյանին, որը Սահմանադրության տարիներին մշակութային բեղուն գործունեություն է ունեցել իր ծննդավայրում, 1908 թ. Վանում կազմակերպել է առաջին թատրոնը, ստեղծել սիրողների մի թատերախումբ, բեմադրել մի շարք պիեսներ, այդ թվում իր հեղինակություններից՝ «Ընտանիքը»։ Սպանվել է Վանի բանտում, կուսակալ Ջեվդեթի հրամանով։ Նույն բանտում է սպանվել մշակութային գործիչ, «Երկիր» թերթի խմբագիր, մի քանի գրքերի հեղինակ Տիգրան Օտյանը (Ասո)։

Մեծ եղեռնին զոհ գնացին հազարից ավելի հոգևորականներ, որոնցից շատերն ունեցել են մշակութային, կրթական, գրական գործունեություն։ Հիշատակենք դրանցից գեթ մի քանիսին՝ Ներսես եպ. Դանիելյան, Վահան վարդ. Հակոբյան, Գեղամ վարդ. Թեվեքելյան, Վարդան քհ. Ասլանյան, Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ, բանասեր Մատթեոս Հաճյան, Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Ստեփան Սարյան, հայտնի մանկավարժ Գեվորգ Թուրյան և ուրիշներ։ Վերջինս ստացել է բարձրագույն կրթություն Ամերիկայի Դորչեստր քաղաքի համալսարանում, հետևելով փիլիսոփայության։ Պրոֆեսորի կոչումով կարճ ժամանակ պաշտոնավարել է նույն համալսարանում, վերադառնալով Թուրքիա, որպես փիլիսոփայության դասատու աշխատել է Արմաշի դպրեվանքում։ Զոհվել է 1915 թ. ջարդերի ընթացքում։

24 «Հուշարձան ապրիլ տասներմեկի»։
25 Նույն տեղում, էջ 53—79։
26 Նույն տեղում։

Մեծ եղեռնից հետո մեր լեզվում առավել կենսունակ դարձավ վերապրող գրաբար Այր՝, վերապրեցին տարագրության ու կոտորածի ալիքների մեջ ընկած մի քանի հարյուր հազար հայեր, ցրվեցին աշխարհով մեկ. արաբական տոթակեզ անապատներից մինչև Գանգեսի ափերը։ Քանի որ մեր նպատակն է խոսել հայ մտավորականության ճակատագրի մասին, կանգ առնենք այն վերապրող հայ գրողների, արվեստագետների վրա, որոնք «հրաշքով» փրկվեցին թուրքական յաթաղանից։ Դրանց թիվը, զոհվածների հետ համեմատած՝ աննշան է։ Պոլսում 1915 թ. ապրիլ ամսին ձերբակալված մոտ 250 մտավորականներից վերադարձան մի քանիսը միայն՝ Կոմիտասը, Ե. Օտյանը, հայտնի տաքիգրքերի հեղինակ Թեոդիկը, հրապարակախոսներ Բյուզանդ Քեչյանը, Լևոն Մոգյանը, Միք. Շամտանճյանը և մի քանի ուրիշներ։

Սրանք ազատվեցին տարբեր պատճառներով։ Կոմիտասը ազատվեց երաժշտասեր մի բարձրաստիճան թուրք անձնավորության միջնորդությամբ. բայց չունեցավ ավելի լավ ճակատագիր, քան իր տարաբախտ ընկերները։ Նա Պոլիս վերադարձավ խելագար վիճակում, փոխադրվեց Հիվանդանոցից-Հիվանդանոց, ունեցավ հոգեկան գարթնումի պահեր և աչքերը առհավետ փակեց քսան տարվա ծանր տառապանքից հետո, Փարիզում։ Սիակ բախտավորություն եղավ այն, որ ունեցավ շիրիմ. գեթ մահից հետո տեղափոխվեց իր ժողովրդի ծոցը, թաղվեց սիրելի Հրազդանի ափին, հայ մտավորականների պանթեոնում։ Ու ամեն տարի թարմ ծաղիկներ են դրվում նրա շիրիմին, այդ հուշարձանի տակ պատկերացնելով նաև եղեռնի զոհ անշիրիմ այն գրողներին, որոնց ոսկորները Չանկրրիի տափաստաններում համբուրվեցին անապատային տաք խորշակի հետ։

Երջանիկ չեղան նաև այն սակավաթիվ մտավորականները, որոնց դուռը չբախեցին 1915 թ. ապրիլի 11-ի գիշերը և հետագա օրերին։ Նրանք էլ տառապեցին վերապրելով իրենց ժողովրդի ահավոր ողբերգությունը, ընկան մեկամաղձության մեջ, կորցրին հոգու հավասարակշռությունը, տանջվեցին այն գիտակցությունից, թե ինչո՞ւ, ինչո՞ւ իրենց ընկերների հետ չէին. չէ՞ որ նրանք զոհվել էին իրենց ժողովրդին ծառայելու «անքավելի հանցանքի» համար։ Այդպես տառապեց Հր. Ասատուրը, բազմակողմանի զարգացման տեր տաղանդավոր մի բանաստեղծ, թատերագետ։ Նա նույնպես ապրեց մոտ երկու տասնամյակ, բայց, Վ. Փափազյանի պատկերավոր արտահայտությամբ՝ ապրեց «ենթարկելով իրեն կամավոր կալանքի ամենափոքրիկ սենյակներից մեկում իր տանը, որտեղից դուրս չելավ՝ մինչև սեազգեստ հուղարկավորներ եկան ու նրան տարան, մերժելով ողջունել արևի լույսը, կրկնելով անընդհատ միշտ նույն հանգերգը. «ինչո՞ւ բոլորն ալ տարին, ինձի թողուցին...»[27]։ Այդպես ապրեց Հր. Ասատուրի կողակիցը՝ բանաստեղծուհի Սիպիլը։ Այդպես ապրեց Զիֆթե Սարաֆը, իրեն մկրտելով մի նոր անունով՝ Հովհ. Ասպետ։ «Միամիտի մը արկածները» սքանչելի վեպը գրողը մղվեց դեպի հուսահատություն ու հոռետեսություն, դարձավ լոակյաց, հիվանդոտ մի հոգի, մի բարոյախոս, կյանքի վերջին օրերն անցկացնելով հայ որբերի շրջանում։ Միք. Շամտանճյանը եղել էր Չանկրրիում, դեպի կառափնաա տարվող ամեն մի խմբի հետ հոգով սպանվել ու բզկտվել, բայց մարմնակա.ն ջարդի իր հերթը չհասավ։ Սրբ եկավ Պոլիս, հոգով շատ ավելի մոտ էր անդրաշխարհին, քան կյանքին,

27 Վահրամ Փափազյան. Սրտիս պարտքը. էջ 168։

բանակցում էր մահվան հետ, ստեղծելով մշուշապատ, ցուրտ ու անկենդան մի գրականություն՝ իր խմբագրած «Ոստան» պարբերականում և նրանից դուրս, մինչև որ 1926 թ. հանգստացավ նրա բորբոքված ուղեղը։

Իրենց հոգեկան արիությունը կորոդացան պահել քչերը։ Դրանցից էին հրապարակախոս խմբագիր Արամ Անտոնյանը և մեծ երգիծաբան Երվանդ Օտյանը։ Երկուսն էլ հասել էին մինչև Տեր-Զորի տոթակեզ վայրերը, երկուսն էլ աղատվել արտաքուստ զավեշտական, խորքում ողբերգական հանգամանքներում։ Մտավորականներից շատերը գրի են առել աքսորի իրենց կյանքը և հրատարակել գինադադարից հետո։ Ա. Անտոնյանը հրատարակեց «Այն սև օրերուն» հուզիչ գիրքը, Ե. Օտյանը՝ «Անիծյալ տարիները», Միք. Շամտանճյանը՝ «Հայ մտքին հարկը եղեռնին», սեբաստացի բանասեր Կ. Գաբիկյանը՝ «Եղեռնապատումը», Գր. Պալաքյանը՝ «Հայ Գողգոթան» երկհատոր ծավալուն հուշագրությունը, որը ամենից ամբողջական ու հավաստի աղբյուրն է մնում հայ մտավորականության սպանդի։

Ստեղծվեց ստվարածավալ մի գրականություն՝ բազմաթիվ լեզուներով։ Բայց ստեղծվեցին այդ մարտիրոսագրության պատմության առանձին դրվագները։ Հայ պատմագրության խնդիրներից մեկն է՝ մեծ զգուշությամբ ու երկյուղածությամբ հավաքել գրավոր այդ վավերագրերը, նրանցով կառուցել գիտական, ամբողջական մի հետազոտություն, որը և կլինի յուրահատուկ մի պանթեոն հայ մտքի բոլոր անթաղ զոհերի։

ЖЕРТВЫ ЗАПАДНОАРМЯНСКОЙ ИНТЕЛЛИГЕНЦИИ

Г. Х. СТЕПАНЯН

(Резюме)

Организованная правительством младотурков массовая резня армян унесла также и значительное число представителей западноармянской интеллигенции. По разработанной программе в апреле 1915 г. в Константинополе и других городах Турции младотурки арестовали более чем 1000 представителей армянской интеллигенции: писателей, искусствоведов, редакторов-публицистов, педагогов, деятелей культуры, в числе которых были такие выдающиеся деятели, как Григор Зограб, Даниел Варужан, Сиаманто, Рубен Севак, Мелкон Кюрджян, Тлкатинци, Ерухан, актер Енок Шаен и другие. Они были сосланы в глубь Турции, где в июне и июле 1915 г. были зверски растерзаны.

Приводимые в статье факты свидетельствуют о том, что резня безоружных армян и казни интеллигенции были не результатом военных событий, а претворением в жизнь разработанной младотурками еще до начала первой мировой войны программы уничтожения армян, проживавших в Западной Армении и в разных районах Турции.